

26 Իսկ Յակոբու պետին նալեան
Որ առեալ էր զթուղթ Սահակայն,
Նախ քան Սարգսի անդ ըզժաման
Բորբոքեալ էր մաղձն ընդ արեան:

27 Վասն այն իսկոյն կամեցեալ էր,
Դրանն Արքայի որպէս ծէսն էր,
Ծանուցանել զոր լըւեալն էր,
Վանել զՍարգիս որ անմեղն էր:

28 Այլ Սամուէլ բաբունն աղու,
Որ փոխանորդն էր Յակոբու,
Արգելէր զայն հարուած հատու
Առ փորձել նախ Սարգսին լեզու:

29 Արդ ի դիտել Պատրիարզին
Ըզյարգանս, սէր անկեղծ Սարգսին,
Եւ ըզգրեալ բան ահագնին
Ջարմանք կալնոյր զինքն անդրստին:

30 Յետ աւուրց ինչ Յակոբ ծանեալ
Ջանմեղութիւն Սարգսի դիւրաւ,
Եւ ըզբարուրն որ զըրեցաւ:
Նոյն Սահակայ պատրիշ զըրչաւ:

31 Բայց ի Յակոբ յաւէտ մընայր
Անհաստատ ինչ կասկածանք յար,
Իբրու Սարգիս յաւէժ խոկայր,
Խըլել յիւրմէ զաթոռն յոր կայր:

32 Եւ արդ Սարգիս վարուքն ազնիւ
Անդ վերըստին գըտեալ պատիւ
Սիրիւր գովիւր շըրթանց բանիւ
Մեծամեծաց փոքեաց անթիւ: